

ԱՄԻԴԸ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ԿՈՉԵԼՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ
ԱՎԱՆԴՈՒՅԹԸ

Բանալի բառեր՝ Տիգրանակերտ, Ամիդ, Դիարբեքիր, Միջագետք, Հայաստան, Օսմանյան կայսրություն, Տիգրանակերտի հայ բնակչությունը, Տիգրանակերտի հայկական ավանդույթը:

XIX դարում Հայաստան այցելող հետաքրքրասեր ու հնասեր եվրոպացի-ներին զբաղեցնում էր Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղորոշման հարցը. նրանք այն նույնացնում էին մերթ Ամիդ-Դիարբեքիրի, մերթ Ֆարկին-Նփրկերտ-Սիլվանի հետ, մերթ փնտրում Խարզան գավառակում ու հասնում անգամ Սղերդ¹: Տիգրան II Արտաշեսյանի (Ք.ա 95-55) կառուցած Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղի հարցը մասնագիտորեն քննել են բազում հետազոտողներ, առաջ քաշել տեղորոշման տարատեսակ վարկածներ, որոնցից չորս հիմնական-ները հետևյալն են. 1. Ֆարդին-Նփրկերտ (Սիլվան), 2. Արզնի (Արզանի) ավե-րակներ քաղաքատեղին, 3. Թիլ-էրմեն (Ղըզըլ-Թեփե) ավանը 4. Ամիդ-Դիարբե-քիրը²: Լեհման-Հաուպտի Նփրկերտյան տեսակետը զարգացրել է Հ. Հակոբյանը³, իսկ Արզնի ավերակներում Տիգրանակերտի տեղորոշման Հ. Կիպերտի վարկածն ու Թ. Սինկլերի⁴ համոզիչ փաստարկները փորձում է հաստատել Վ. Ղազարյանը՝ հատկապես լրջագույն կովան համարելով ամֆիթատրոնի գոյությունը⁵:

Տիգրանակերտի տեղի հարցում քննարկումները շարունակվում են, սա-կայն հետազոտողները գրեթե առանց բացառության համակարծիք են՝ Ամիդ-Դիարբեքիրը Տիգրան II Արտաշեսյանի հիմնած քաղաքը չէ: Այդուհանդերձ,

¹ John Macdonald Kinneir, *Journey through Asia Minor, Armenia, and Koordistan in the Years 1813 and 1814: with Remarks on the Marches of Alexander, and Retreat of the Ten Thousand*, London, 1818, p. 396.

² Վ. Ղազարյան, «Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղորոշման շուրջ», Հայաստանը եւ Արեւելա-քրիստոնեական քաղաքակրթությունը Բ միջազգային գիտաժողովի զեկույցներ, Երևան, 2017, էջ 153:

³ Հ. Հակոբյան, «Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը», *ՊԲՀ*, 2007, № 3 (176), էջ 3-29:

⁴ T. Sinclair, "The Site of Tigranocerta (I)," *REArm.*, t. 25, 1994-1995, pp. 183-253, T. Sinclair, "The Site of Tigranocerta (II)," *REArm.*, t. 26, 1996-1997, pp.51-117.

⁵ Վ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 153-164:

Ամիրզե-Տիգրանակերտ շփոթը վաղուց դուրս է եկել հայկական միջավայրից: XVII դարում ֆրանսիացի առևտրական ու ճանապարհորդ Տավերնիեն այն համարում է Տիգրանակերտը⁶, կաթոլիկ հոգևորական Զուգեպպե Կամպանիլեն (1762-1835 թթ.) գրում է, որ քաղաքը Տիգրան արքան է կառուցել⁷, իսկ բրիտանացի քաղաքական գործիչ Լորդ Վորկուորթը XIX դարի վերջում խոսում է Տիգրանի պալատի մասին⁸:

Եթե Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղորոշման հարցի շուրջ գոյություն ունի ծանրակշիռ մասնագիտական գրականություն, ապա Ամիրզե Տիգրանակերտ կոչելու պատճառները համեմատաբար քիչ են լուսաբանված, և եղած տեսակետներն էլ ամբողջովին չեն պատասխանում հարցին՝ երբ և ինչու են հայերն Ամիրզե Տիգրանակերտ անվանել: Այս հոդվածը հարցին պատասխանելու փորձ է:

Ամիրզե-Տիգրանակերտ շփոթին առանձին աշխատություն մեջ Ե. Քասունին գալիս է այն եզրահանգման, որ Խորենացու, Կորյունի, Բուզանդի, Փարպեցու, Ագաթանգեղոսի երկերում, այսինքն՝ հայ պատմագրության սկզբնական շրջանում, Ամիրզե-Տիգրանակերտ շփոթ գոյություն չուներ⁹: Իսկ Բաբկեն Հարությունյանը ցույց է տալիս, որ Ամիրզե-Տիգրանակերտ շփոթը տեղ է գտել զարգացած միջնադարի մատենագիրներ Մատթեոս Ուռհայեցու, Սմբատ Սպարապետի, Վարդան Արևելցու երկերում¹⁰: Իսկապես, շփոթի հեղինակային իրավունքը պատկանում է Ուռհայեցուն «...ի վերայ Տիգրանակերտ քաղաքին, որ անուանեալ կոչի Ամիրթ»¹¹, — գրում է պատմիչը: Թեպետ հայ մատենագիրները տեղանվանաբանական եզրաբանության հարցում պահպանողական են, բայց ուռհայեցի պատմիչը փոքր-ինչ նորարար է, օրինակ՝ նա է առաջին անգամ գործածում Քրդաստան բառը:

Ուռհայեցուն կրկնում է Սմբատ Սպարապետը¹², իսկ Վարդան Վարդապետն ավելի առաջ է գնում՝ գրելով. «...Տիգրան շինեաց զՏիգրանակերտ, որ ասի

⁶ J.-B. Tavernier, *Les six voyages De Jean Baptiste Tavernier, Ecuyer, Baron D'Aubonne, qu'il a fait en Turquie, En Perse et aux Indes, pendant quarante ans*, nouvelle édition, T. 1, 1712, Paris, p. 426.

⁷ Giuseppe Campanile, *Storia della regione del Kurdistan*, Napoli, 1818, p. 63.

⁸ *Notes from a Diary in Asiatic Turkey*, by Lord Warkworth, M. P., London, 1898, p. 235.

⁹ Ե. Քասունի, *Ամիրզե (Տիգրապէթի) Տիգրանակերտ (Ֆարդին) շփոթը հայ պատմագրութեան մէջ*, Պէյրութ, 1968, էջ 59:

¹⁰ Բ. Հարությունյան, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ)*, Երևան, 2001, էջ 199:

¹¹ Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 15:

¹² Տարեգիրք արարեալ Սմբատայ սպարապետի Հայոց, որդոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կարապետ վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 31:

Ամիրթ»¹³: Այդուհանդերձ, ինչպես շուտով կհամոզվենք, Ամիր-Տիգրանակերտի նույնությունը դեռ երկար ժամանակ քաղաքացիություն չէր ստանալու, իսկ նույնության հարցում պատմիչի մեկ վրիպումը բնավ վճռորոշ չի եղել:

Ամիր Տիգրանակերտ կոչելու հայկական ավանդույթի հաստատումը (գուցե վերահաստատումը), մեր խորին համոզմամբ, պայմանավորված է քաղաքում հայ բնակչության ստվարացման հետ: Հայերեն ձեռագրերի հիշատակարանային վկայություններն Ամիրում հայերի հաստատման ու Ամիր Տիգրանակերտ կոչելու պատճառների վերհանման տեսանկյունից առանցքային են: Ուստի, դիմենք հիշատակարանների օգնությանը:

XIII դարից մեզ չի հասել Ամիրում գրված կամ ընդօրինակված որևէ ձեռագիր ու հիշատակարան, ինչը կարծում ենք՝ ցուցիչ է այն բանի, որ հայությունը քաղաքում XIII դարում մշակութային ակտիվ գործունեություն չի ծավալել, ուստի այն դեռ հայության նշանավոր կենտրոններից չի եղել, ինչպիսին դառնալու էր դարեր անց: Ի տարբերություն Տիգրանակերտի՝ Ամիր տեղանունը վկայված է օրինակ 1158 թվականի մի հիշատակարանում¹⁴:

XIV դարի երկրորդ կեսից մեզ է հասել Ամիրում և այլ վայրերում գրված մի քանի ձեռագիր, որոնցում հիշատակարանների հեղինակները քաղաքը կոչում են ոչ թե Տիգրանակերտ, այլ Ամիր (առավել տարածված էին Ամիր կամ Յամիր ձևերը)¹⁵: 1373 թվականին քաղաքում գրվել է մի ձեռագիր, որում հեղինակն իր քաղաքը կոչում է Ամիր¹⁶: XIV դարի վերջում խիզանում հայ հիշատակագիրներից մեկը, ի թիվս այլ քաղաքների, հիշում է Ամիրը՝ չտալով Տիգրանակերտ անունը¹⁷:

Հետաքրքիր է, որ 1402 թ. մի հիշատակարանում խոսվում է Մոսուլում ու Դիարբեքում (Դիարբեքիր) Հայոց եկեղեցու թեմական առաջնորդ արքեպիսկոպոսի ձեռնադրության մասին¹⁸, ինչն այդ վայրերում հայկական տարրի աշխուժացման ապացույց է: Եթե հիմք ընդունենք այն, որ Ամիրից մեզ հասած ձեռագրերը թվագրվում են XIV դարի երկրորդ կեսով, ապա կարելի է եզրակացնել, որ հայերը քաղաքում սկսում են ակտիվություն ցուցաբերել Իլխանության ան-

¹³ Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Սուրբ Ղազար, Վենետիկ, 1862, էջ 34:

¹⁴ Գարեգին Ա. Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա, (Ե. դարից մինչև 1250 թ.), Ամբիկիաս, 1951, էջ 374, նույնը տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 178: Նույն դարում մեկ այլ դեպքում ևս վկայված ենք տեսնում Ամիր անունը, նույն տեղում, էջ 163:

¹⁵ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 465:

¹⁶ Նույն տեղում, էջ 511:

¹⁷ Նույն տեղում, էջ 618:

¹⁸ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն առաջին (1401–1450 թթ.), Երևան, 1955, կազմեց Լ. Խաչիկյան (այսուհետ՝ Հիշատակարաններ, ԺԵ դար, Մաս Ա), էջ 28:

կումից հետո՝ հավանաբար վերաբնակվելով այս շրջաններում, երբ Հայաստանում տիրող համեմատաբար խաղաղ դրությունը փոխվում է երկարատև պատերազմների ու անիշխանության:

Թերևս իմաստ չէր ունենա փնտրտուքը, եթե XV դարի հազարավոր հիշատակարաններից մեկում գեթ մեկ անգամ հանդիպեինք Տիգրանակերտ անվանը: Մեզ հետաքրքրող քաղաքում XV դարում գրված ձեռագրերի հիշատակարաններից հստակ երևում է, որ այնտեղ ապրող հայերն իրենց քաղաքը կոչում են Ամիր¹⁹: Թուվմա Մեծոփեցին կիրառում է թե՛ Ամիր, թե՛ (Դիարբեկ) (Դիրաբքիր) անունները, սակայն ոչ Տիգրանակերտ²⁰: 1431 թ. Ամիրգում Ավետարան ընդօրինակած Գրիգորը գրում է. «Ի գաւառս Միջագետաց..... յԱմիրթ մայրաքաղաքի»²¹: Մեկ այլ դեպքում նա առիթ է ունենում հիշատակելու սեփական քաղաքի անունը և դարձյալ այն կոչում է Ամիրթ²²: Մկրտիչ Նաղաշը նույնպես իր քաղաքը Ամիր է կոչում՝ Համիրթ ձևով²³: Նշյալ դարում այլ վայրերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում բազմիցս շրջանառվում է Ամիր անունը, իսկ քաղաքի Տիգրանակերտ անունը վկայված չէ²⁴:

Նույն ժամանակաշրջանում քաղաքում տեղի են ունենում լուրջ փոփոխություններ, որոնք կարևոր են քննվող հարցի տեսանկյունից: XV դարի սկզբից Ամիրգը դառնում է աղ ղոյունլուների իշխանության կենտրոնը: Ռազմական ծառայության դիմաց Լենկ Թիմուրը որպես իբթա աղ ղոյունլու թուրքմենների պետության հիմնադիր Քարա Օսմանին (1403-1435 թթ.) է տալիս Դիարբեքիրը²⁵: Իդրիսի Բիթլիսի Սելիմշահնամայում Ամիրգը համարվում է աղ ղոյունլուների՝ բայանդուր իշխանների ու արքաների մայրաքաղաքը, Իրանի նվաճման բանալին: XV-XVI դդ. թե՛ հայկական, թե՛ հատկապես մահմեդական սկզբնաղբյուրներում Դիարբեքիր կոչվում է ընդհանրական շրջանը՝ երկիրը, իսկ Ամիր՝ կենտրոնը՝ մայրաքաղաքը: Ընդ որում, նույն դարաշրջանի սկզբնաղբյուրներում հստակ է Դիարբեքիրը՝ որպես առանձին երկրի ընկալումը. սովորաբար այն հիշատակվում է Հայաստանի, Ասորպատականի ու Իրանի հարևանությամբ:

Ենթադրաբար, աղ ղոյունլուների առաջնորդներ Քարա Օսմանի և նրա որդի Համզայի՝ քրիստոնյաների նկատմամբ բարեհաճ վերաբերմունքը նպաստել է միջազգային առևտրային խաղմերուկներին ավելի մոտ և ավելի ապահով Ամիր-

¹⁹ Նույն տեղում, էջ 458:

²⁰ Նույն տեղում, էջ 452:

²¹ Նույն տեղում, էջ 403:

²² Նույն տեղում, էջ 405:

²³ Նույն տեղում, էջ 464:

²⁴ Նույն տեղում, էջ 632, 278, 286, 287, 344, էջ 471:

²⁵ Ebu Beker-î Tihranî, Kitab-ı Diyarbekriyye, Ankara, 2014, s. 2.

դուռ ու նրա շրջակա բնակավայրերում հայերի հաստատվելուն: Արժանահիշատակ է, որ Թովմա Մեծոփեցին Ղարա Օսմանին անվանում է «զտէրն Ամթայ Օթման անուն Աղ-ղօյինլու, սիրօղ յոյժ ազգիս հայոց»²⁶: Քրիստոնյաների նկատմամբ Համզայի (1436-1444 թթ.) դրական վերաբերմունքի մասին են վկայում թե՛ հայկական, թե՛ մահմեդական սկզբնաղբյուրները: Ըստ հայկական աղբյուրի՝ սուլթան Համզան նույնիսկ իրեն քրիստոնյա էր համարում. «...սուլթան Համզա, զոր ինչ ականատես եղև հօրէն իւրմէ, այլ առաւել պատուով ընդունեցաւ զսա՛հայր ինքեան աւանդելով փոխանակ հօր իւրոյ: Եւ մեծաւ պատուով փառաւորէր զսա քան զամենայն մեծամեծս իւր, մինչ բազմաց ասել թէ ինքն քրիստոնեայ է, զի այս չափ սիրէր և պատուէր զեպիսկոպոսն»²⁷: Իսկ ահա թուրքմենական աղբյուրներին պետութեան հիմնադիր բայանդուր (բայընդըր) ցեղին նվիրված պատմութեան մեջ Աբու Բաքր-ի Թիհրանին Համզային համարում է մահմեդականների թշնամի ու քրիստոնյաների բարեկամ. «Քրիստոնյա հոգևորականներին պատվելով բարձրացրեց, նրանց հետ խոսելիս որպէս հարգանքի նշան ոտքի էր կանգնում», — գրում է պատմիչը²⁸: Հետաքրքիր է, որ ըստ Թիհրանիի՝ Համզան Ամիղը գրավել է մի քրիստոնյայի դավաճանութեան շնորհիվ. «Քրիստոնյաների վրա ընդհանրապէս չհարձակվեց, ընդհակառակը՝ նրանց հարգանքի ու պարգևների արժանացրեց»,²⁹ — այսպէս է նկարագրում պատմիչը քաղաքի առումն ու քրիստոնյաների նկատմամբ վերաբերմունքը:

Կարծում ենք՝ XV դարի սկզբներից քրդերի ու ղարա ղոյունլուների չգաղարող պատերազմների հետևանքով Հայաստանի հարավային շրջաններից դեպի Ամիղ գաղթ է եղել՝ ստվարացնելով քաղաքի հայութեան թիվը: Այսպէս, Մկրտիչ Նաղաշը, որ դարձավ Ամիղի եպիսկոպոսը, այստեղ էր գաղթել Բաղեշի Պոռ գյուղից³⁰: Կարելի է կարծել, որ աղ ղոյունլուներն Արժկեից ու Արճեշից գերի առնված հայութեանը բնակեցրել են իրենց կենտրոն շահաստան Ամիղում: XV դարի վերջում կամ XVI դ. սկզբում Կողբից (հավանաբար խոսքը Սասունի խուլի գավառակի մասին է) ոմն Խաչատուր իր ընտանիքով տեղափոխվում է այստեղ. «Սա էր յերկրէն Կողբայ, որ եկեալ ընտանեօք իւրովք ի քաղաքն, որ

²⁶ Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 118:

²⁷ Հիշատակարաններ, Ժե դար, Մաս Ա, էջ 624:

²⁸ Ebu Bekr-İ Tihranî, էջ 97: Իշխանության համար աղ ղոյունլու եղբայրների մղած պայքարում պատմիչը չէր պաշտպանում Համզային, դա կարող էր լինել նրան վատաբանելու կամ վատ մահմեդական ներկայացնելու շարժառիթներից մեկը:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Հիշատակարաններ, Ժե դար, Մաս Ա, էջ 622-623:

կոչի Ամիրթ, և բնակեցաւ անդ»³¹: Հենց XV դարի առաջին կեսին՝ Նաղաշի ջանքերով կառուցվում է Արղնիի Բարձրահայաց Սուրբ Աստավածածինը, իսկ բուն քաղաքում վերակառուցվում է սուրբ Թեոդորոս եկեղեցին³²: Հայերի թվի ավելացմանը զուգահեռ՝ կարիք է զգացվում նոր եկեղեցի կառուցելու: Թեպետ Սուրբ Կիրակոսի հիմնադրման տարեթիվը մեզ հայտնի չէ, սակայն արդեն 1551 թ. վերանորոգվել է. «Ռ (1551) թվին նորոգեցաւ Յամիրթ սուրբ Կիրակոս»³³:

Թե՛ XV դարում, թե՛ 1515-ին՝ Օսմանյան նվաճումից հետո հարավային նահանգներից շարունակվել է հայերի հոսքը դեպի «ասորական Միջագետք»՝ ինչպես Ամիրգ, այնպես էլ Մարդին, Մծբին, Ուռհա, և այլ վայրեր³⁴: XVI դարի վերջերին ներսես Մոկացի անունով գրիչը բնակվում է Ամիրգում³⁵, Ամիրգում է հաստատվել նաև Հովհաննես Չմշկածագցին (ի գեղջէն Աղձնեաց)³⁶, Մուշի Քարծոր գյուղից Արիստակեսը գրում է, որ Մուշից «եկեալ պանդխտեցա ի մայրաքաղաքն յՈւրհայ»³⁷, XVI դարի վերջում Բարսեղ Սասնեցին ապրում է Ուռհայում³⁸: Այս առումով շատ կարևոր տեղեկություններ է պարունակում Դիարբեքիրի էյալեթի 1540 թվականի թափու թահրիր դաֆթարը, որ լրացնում է հայկական աղբյուրների՝ դեպի Ամիրգ միգրացիայի վերաբերյալ տվյալները: Դաֆթարում քրիստոնյաների անուններից (*Egillu, Hisn-i Keyf-(lu), Namselu, Ciskalu, Sasuni*) հստակ երևում է, որ Ամիրգում հաստատվել են՝ գալով քաղաքի շրջակա բազում վայրերից³⁹:

XVI դարի սկզբում Արևելք այցելած եվրոպացի ճանապարհորդ Ջովաննի Մարիա Անջոլելլոյի տպավորությունամբ՝ Ամիրգում հույները, հայերն ու հրեաներն

³¹ Հայոց նոր վկաները (1155-1843), աշխատութեամբ Յ. Մանանդեանի և Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 350:

³² Տե՛ս Հիշատակարաններ, Ժե դար, Մաս Ա, էջ 627:

³³ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Բ. Է, յօրինեց Հ. Սահակ Վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 319:

³⁴ Աշխարհացոյցը Ամիրգը նամաչում է Միջագետքում, այլ ոչ՝ Մեծ Հայքում, տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 113-114:

³⁵ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. տասնմէկերորդ, կազմեց Նորայր արքեպս. Պողարեան, Երուսաղեմ, 1991, էջ 292:

³⁶ Հայերեն ձեռագրերի Ժե դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), Բ. Բ, կազմեցին Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Երևան, 1978, էջ 47 (այսուհետ՝ Հիշատակարաններ, Ժե դար, Մաս Բ):

³⁷ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Բ. Երկրորդ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1967, էջ 50:

³⁸ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Բ. Զ., յօրինեց Հ. Սահակ Վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 62:

³⁹ **M. Mehdi İlhan**, «XVI. Yüzyılın İlk Yarısında Diyarbakır Şehrinin Nüfusu ve Vakıfları: 1518 ve 1540 Tarihli Tapu Tahrir Defterlerinden Notlar», *Tarih Araştırmaları Dergisi*, 1992, 16 (27), s. 61.

ավելի շատ էին, քան մահմեդականները⁴⁰: Այդ են վկայում նաև թահրիր դաֆ-թարներին՝ օսմանյան հարկամատյանների, անշափ արժեքավոր տվյալները: Թուրք հետազոտող Մեհդի Իլհանի հաշվարկների համաձայն՝ 1540 թ. քաղաքն ուներ 18226 բնակիչ, որից քրիստոնյաները՝ 10450, մահմեդականները՝ 7776, այսինքն՝ քրիստոնյաները կազմում էին 57, մահմեդականները՝ 43 տոկոս⁴¹: Օսմանյան աշխարհագիր մատյանների տվյալները ցույց են տալիս, որ 1518-1540 թթ. ընթացքում քաղաքի ոչ մահմեդական բնակչությունն աճել է 41 տոկոսով⁴²: Վերոհիշյալ թուրք հետազոտողի կարծիքով՝ քրիստոնյաները գյուղերից շարժվել են քաղաք, իսկ գյուղերը բնակեցվել են մահմեդականներով⁴³: XVI դարի առաջին կեսում փաշայանիստ Ամիրը դառնում է Օսմանյան կայսրության ամենախոշոր քաղաքներից մեկը, որի բնակչության մեծ մասը քրիստոնյաներ էին: Ամիրը այն ժամանակ ավելի բազմամարդ քաղաք էր, քան կայսրության մյուս նշանավոր կենտրոնները՝ Սեբաստիան, Անկարան, Կեսարիան, Քոնիան, Թոխատը, Սարաևոն, Աթենքն ու Մոֆիան:

Միևնույն ժամանակ թյուրքական տարրը վերոնշյալ շրջաններում նվազում է: Միայն 1518-1540 թթ. ընթացքում մահմեդականների թիվը պակասել է 8 տոկոսով⁴⁴: Այդ ղոյունլուկներին՝ վերոնշյալ վայրերը լքելուն զուգահեռ՝ Ամիրը անընդհատ ներարկվում է հայ գաղթականության նորանոր ալիքներով, ուստի պատահական չէ, որ քաղաքաբնականների մեծամասնությունը XVI դարի սկզբին քրիստոնյաներն էին, ինչն էլ արձանագրել է ինչպես եվրոպացի ճանապարհորդ Ջովաննի Մարիա Անջոլելլոն, այնպես էլ 1540-ի օսմանյան հարկամատյանը:

Միաժամանակ XVI դարում քաղաքը տնտեսական բուռն վերելք է ապրում: XVI դարի երկրորդ կեսի Ամիրի տնտեսական կյանքին նվիրված հոդվածում թուրք հեղինակ Յըլմազ Քուրթը գրում է, որ Դիարբեքիր էյալեթի տեքստիլ արդյունաբերությունը կարելի է համեմատել միայն Հալեպի ու Բուրսայի հետ: Դիարբեքիր քաղաքի կենտրոնում գտնվող ներկատան տարեկան եկամուտը կազմում էր 213617 աբչե, որը վկայում է քաղաքում ջուլհակության զարգացածության մակարդակը⁴⁵: XVI դարում Դիարբեքիրի էյալեթի տնտեսական կյանքն աշխու-

⁴⁰ Հ. Հակոբյան, *Ուղեգրություններ, հ. Ա, ԺԳ-ԺԶ դար (1253-1582)*, Երևան, 1932, էջ 291:

⁴¹ M. Mehdi İlhan, *Amid (Diyarbakır), 1518 Tarihli Defter-i Mufasssal*, Ankara, 2000, s. 22.

⁴² Նույն տեղում, էջ 22:

⁴³ Նույն տեղում, էջ 93-94:

⁴⁴ Նույն տեղում, էջ 22:

⁴⁵ Yılmaz Kurt, «XVI. Yüzyılın İkinci Yarısında Diyarbakir Eyaleti'nde Sanayi ve Ticaret», *Tarih İncelemeleri Dergisi*, 5 (1), 1990, s. 199.

ժանում է. միայն Ամիզի սանջակում 1540/1550-1568 թթ. ընթացքում բամբակի արտադրությունն աճում է 63 տոկոսով⁴⁶:

XVI դարում Ամիզը վերածվում է խոշոր քրիստոնեաբնակ քաղաքի, իսկ քրիստոնյաների գերակշիռ մասը հայերն էին: Դա է ապացուցում այն, որ օսմանյան հարկամատյաններում *eramîne* (հայեր) հավաքական անվամբ են հիշվում Դիարբեքիրի անխտիր բոլոր քրիստոնյաները⁴⁷: Պատահական չէ, որ XVII դարում Էվլիյա Չելեբին Դիարբեքիրը կոչում է նաև հայերի երկիր⁴⁸ և բացի հայերից չի խոսում այլ քրիստոնյաների մասին. «Այս քաղաքի շրջակայքում ապրում են բազմազան ցեղեր, բնակչությունը՝ քրդեր, թուրքմեններ, արաբներ, աջեմներ, իսկ ռայաները հայեր են»⁴⁹: Թեպետ հայերից բացի, բնականաբար, քաղաքում ապրում էին ասորիներ ու հույներ⁵⁰, սակայն հայ մեծամասնությունը ստվերում էր նրանց: XV դարի հայկական մի աղբյուրի հիշատակությունը լրացնում է քաղաքի բազմէթնիկ պատկերը. «Թուրք, և Թաթ, և Թաթար, և Քուրթ, և Արապ և Զհուտ»⁵¹: Քաղաքում ապրում էին նաև արևորդիներ⁵²:

Այսպիսով, XVI դարում քաղաքի պատմության նոր դարագլուխ է բացվում, քաղաքը բազմամարդ է դառնում, տնտեսապես զարգանում, փոխվում են հասարակական հարաբերություններն ու քաղաքի հայությունը փորձում է հաստատել իր տեղը, փաստել իր հնամենիությունն ու քաղաքի Տիգրանակերտ անվան հնավանդությունը: Դա փաստելու ամենաուղիղ ճանապարհը Մովսես Խորենացու Հայոց Պատմությունն էր, որի՝ Տիգրանակերտի կառուցման մասին վկայությունը հիմք է ծառայում վերակենդանացնելու հեթանոս արքայի հիմնած քաղաքի մասին հիշողությունը: Խորենացին գրում է. «յուզարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծաւ ամբոխի ի Հայս, յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ է Տիգրանակերտ»⁵³:

⁴⁶ Behset Karaca, Durmuş Volkan Karaboğa, «XVI. Yüzyılda Diyarbakir Eyaleti'nde Sınai Bitkileri Üretimi», *Alinteri Journal of Social Sciences* 1, 2017, s. 24.

⁴⁷ M. Mehdi İlhan, *Amid (Diyarbakır)*, էջ 95.

⁴⁸ Mehmet Akbaş, «Evliya Çelebi'nin Gözüyle Kürtler ve Kürdistan», *Artuklu Akademi* 2, 2015, s. 47.

⁴⁹ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 4, Թուրքական աղբյուրներ Գ, Էվլիյա Չելեբի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա.Խ. Սաֆրաստյանի, Երևան, 1967, էջ 186:

⁵⁰ Հ. Հակոբյան, *Ուղեգրություններ*, էջ 291:

⁵¹ Հիշատակարաններ, Ժե դար, Մաս Ա., էջ 623-624:

⁵² Թովմա Մեծփեցի, էջ 66, Հայոց նոր վկաները (1155-1843), էջ 360:

⁵³ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց Մեծաց, Մատենագիրք Հայոց, հ. Բ., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1827: Խորենացու Պատմության մեջ Տիգրանների շիրքի մասին Արմեն Պետրոսյանը գրում է. «Խորենացին հիշում է երեք Տիգրան, որոնցից Տիգրան միջինն է ժամանակագրորեն համապատասխանում Տիգրան Մեծին: Բայց վերջում, այսինքն՝

Արմեն Պետրոսյանը, անդրադառնալով Տիգրանի կերպարին, գրում է. «Տիգրանն այս շարքում ներկայացվում է, որոշ առումով, որպես «երրորդ Հայկ», այսինքն՝ հայոց ինքնությունը կերտող երրորդ հերոս: Այսպիսի բարձրության չի հասցվել և ոչ մի ուրիշ հայ արքա: Խորենացու այս եռյակը ցույց է տալիս, թե էական, առասպելական ազգածին նահապետների հետ համադրելի ինչպիսի դեր է վերագրվել Տիգրանին վաղմիջնադարյան Հայաստանում հայ ինքնության սիմվոլների շարքում: Խորենացու հեղինակությամբ այդ դերը մնացել է հայոց մեջ և հաջորդ դարաշրջաններում»⁵⁴:

1602 թվականին հայ հիշատակագիրներից մեկը Մովսես Խորենացու հաղորդումը հետևյալ կերպ է վերաձևակերպում. «յաստուածապահ էլ յաստուածախնամ ի մայրաքաղաքն Տիգրանակերտ, որ շինեալ եղեւ ի Տիգրանայ արքայէն Հայոց, յանուն Տիգրանուհի քեր իւրոյ, զոր եւ Մովսես պատմաբանէ, որ եւ այժմ մականուամբ Յամիթ յորջորջեալ կոչի»⁵⁵: Ընդ որում, հայաշատ քաղաքի բնակչությունը հավատացած էր, որ հենց Տիգրանն է կառուցել իրենց քաղաքը: Բանն այն է, որ իսկական Տիգրանակերտի գոյությունը շատ վաղուց էր մոռացվել՝ ճանապարհ հարթելով նոր Տիգրանակերտի «ստեղծման» համար: Արդեն XVII դարի առաջին կեսում Տիգրանակերտ անունն առնվազն հիշատակարաններում այնքան տարածված էր ու գործածական, այնքան էր ամրագրվել քաղաքի հայության շրջանում, որ Ամիգ անունը համարում են նորամուծ և կարծում, թե քաղաքը մշտապես կոչվել է Տիգրանակերտ. «Ի մայրաքաղաքն Տիգրանակերտ, որ այժմ ասի Համիթ»⁵⁶:

XVI դարի ձեռագրերի հիշատարակարանների մի մասի անտիպ լինելն ու համահավաք հրատարակության բացակայությունը հնարավորություն չի տալիս հստակ ասելու, թե երբ է առաջին անգամ աղբյուրներում հանդիպում Տիգրա-

ծողովրդի պատմական հիշողության մեջ, Տիգրան Մեծի կերպարը անցել է դարեւ առաջ թվագրվող Տիգրան երվանդյանին, որին է նվիրված Խորենացու առաջին գրքի մի նշանակալի մասը՝ երեսունմեկ գլուխներից ութը», տե՛ս Ա. Պետրոսյան, «Տիգրան Մեծի առասպելաբանական կերպարը (Սարգիս Հարությունյանի ծննդյան 80-ամյակին)», ՊՔՀ, 2000, № 2, 156-157: Խորենացու երկում Տիգրանակերտի կառուցումը Տիգրան երվանդյանին վերագրելը կարող է պատճառ դառնալ այն թյուր վարկածի առաջացմանը, թե ֆաղափը մշտապես կոչվել է Տիգրանակերտ, սակայն այն կառուցել է ոչ թե Տիգրան Մեծը, այլ Տիգրան երվանդյանը: Տե՛ս նաև Գ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965:

⁵⁴ Ա. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 171:

⁵⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Զ., էջ 958:

⁵⁶ Յուցակ ձեռագրաց Մշոյ Ա. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, խմբագրեց Արայ Գալայճեան, Երուսաղեմ, 1967, էջ 74:

նակերտ անունը: Զեռագրաց ցուցակներում այն տեսնում ենք արդեն 1584-ին⁵⁷, 1587-ին՝ Ամիրզ քաղաքում գրած գրչի հիշատակարանում⁵⁸, 1601-ին⁵⁹, իսկ XVII դարի առաջին տարիներին Տիգրանակերտը անվան գործածությունը լայնորեն տարածվում է:

Բացի այդ, XVII դարի առաջին կեսում քաղաքը քանիցս հիշատակվում է Տիգրան («ի մայրաքաղաքս Տիգրան»⁶⁰ (1613 թ.), «Ի Տիգրանայ մեծ քաղաքին» (1607 թ.⁶¹), «մայրաքաղաքն Տիգրանայ» (1609⁶²), «գրեցաւ Տիգրան մեծ քաղաքի»⁶³ (1626 թ.), ինչպես նաև՝ Ամիրթկերտ (1628 թ.)⁶⁴) տարբերակներով, ինչը քաղաքի հայկական անվան փնտրտուքի յուրահատուկ ցուցիչ է: Գուցե այս շարքում է պետք դիտարկել նաև «տիգրանաշէն մայրաքաղաքն Ամիրզ»⁶⁵ արտահայտությունը, որում «տիգրանաշէն»-ը հավանաբար հատկանունն է: Աստիճանաբար, այն թափանցում է նաև հայ պատմագիրների երկերի մեջ. Գրիգոր Դարանաղյին գործածում է Ամիրզ բառը⁶⁶, ինչը սակայն զերծ չէ շփոթից⁶⁷: Առաքել Դավրիժեցին առավել շատ է տեղ տալիս Ամիրզ-Տիգրանակերտ շփոթին. («նա

⁵⁷ Պաղտասար Համթեցին գրում է, որ 1584 թ. ավարտել է Գանձարանը, որում և կարդում ենք. «Մայրաքաղաքս Ամիրթ ասի// Տիգրանակերտ սա անուանի», *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հ. հիմնգրողը, կազմեց Նորայր Լալա. Պողարեան, Երուսաղեմ, 1971, էջ 145: Հնարավոր է, այն հիշյալ թվականից ավելի ուշ է գրվել: Նույնը տե՛ս և *A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States*, by **Avedis K. Sanjian**, Los Angeles, London, 1976, p. 452:

⁵⁸ «...ի յառաջնորդութեան մերոյ Բաղաթիս Տիգրանակերտ», տե՛ս *Յուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան Վանաց թանգարանի*, հ. Բ., կազմեց Լ. Գ. Մինասեան, Վիեննա, 1972, էջ 234:

⁵⁹ «Համիրթ Բաղթի տիգրանակերտ մեր նահանգի», տե՛ս *Յուցակ հայերէն ձեռագրաց, Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա*, հ. Բ., կազմեց Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 909:

⁶⁰ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, յօրինեց Հ. Սահակ Վրդ. Ճեմճեմեան*, Վենետիկ, 1996, հ. Ե, էջ 1038:

⁶¹ Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), Հ. Ա., կազմեցին Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Երևան, 1974, էջ 281, (այսուհետ՝ Հիշատակարաններ, ժէ դար, Մաս Ա.):

⁶² Նույն տեղում, էջ 335:

⁶³ *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հ. 8, կազմեց Նորայր արքեպս. Պողարեան, Երուսաղեմ, 1977, էջ 10:

⁶⁴ *Հիշատակարաններ, ժէ դար*, Մաս Բ, էջ 319:

⁶⁵ *Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա*, հ. Բ., էջ 50:

⁶⁶ *Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղոյ*, Երուսաղեմ, 1915, էջ 19, 28, 51 և այլն:

⁶⁷ Անտարակոյս է, որ «Եւեալ է ի Միջագետս, եւ ի Տիգրանակերտ բնակելով» գրելով՝ հեղինակը նկատի ունի Ամիրզը, տե՛ս նույն տեղում, էջ 349:

նստաւ առաջնորդ քաղաքին Տիգրանակերտու, այսինքն յԱմթայ»⁶⁸), Սիմեոն Լեհացին քաղաքը ճանաչում է Ամիդ անվամբ, բայց խոստում է «տիգրանաշեն» պարիսպների մասին՝ քաղաքը համարելով հայոց հայրապետների ու արքաների թախտը⁶⁹:

XVII դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեն իր ճանապարհորդությունների վերջում թողած ֆրանսերեն-թուրքերեն տեղանվանացանկում թուրքերեն *Diarbekir*-ին համարժեք է համարում ֆրանսերեն *Tiqueranager*-ը⁷⁰: Միանգամից աչքի է զարնում, որ ճանապարհորդը չի գործածել անտիկ աղբյուրներից քաջահայտ *Tigranocerta*-ն: Կարծում ենք այս անվան գործածությունը ոչ թե Ամիդ-Տիգրանակերտ շփոթի հետեանք է, կամ, այլ կերպ ասած՝ Տիգրանի մայրաքաղաքի տեղը հստակեցնելու մղումը, այլ պարզապես հետաքրքրասեր ֆրանսիացին լսել է քաղաքի հայերից և արձանագրել, ինչը ցույց է տալիս, որ Տիգրանակերտ անունը շրջանառվել է ոչ միայն գրավոր տեքստերում: Հավանաբար *Tiqueranager*-Տիգարանակեր(տ)ի վերջին *t*-ն նա չի գրել ֆրանսերենի առանձնահատկությունից ելնելով, քանի որ վերջին *t*-ն չի կարդացվում: Այն, որ Տավերնիեն քաղաքի անունը հստակեցրել է տեղացիներից, վկայում է նաև այն հանգամանքը, որ Վանի ֆրանսերեն համարժեքն է համարում *Chamiramager*՝ Շամիրամակեր(տ)ը⁷¹: Վանին տրվող այս անվանումը լայնորեն տարածված էր հենց իր ժամանակաշրջանի հայկական միջավայրում⁷²:

XVII դարում հիշատակարանները հիմք ընդունելով կարող ենք ասել, որ Ամիդ անունն ավելի գործածական էր ու կենդանի, իսկ Տիգրանակերտը շատ հաճախ հանդես է գալիս Ամիթի կողքին որպես քաղաքի հին անուն ու «հիշողություն» («ի Տիգրանակերտ Համիթ»⁷³): Չնայած դրան՝ Տիգրանակերտ անունը սկսում է հաճախադեպ օգտագործվել ու արդեն XVII դարի սկզբին հանդես

⁶⁸ Առաֆել Դաւիթեցի, Գիրք Պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ս. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 60, նաև՝ 210:

⁶⁹ Սիմեոն դպրի Լեհացոյ Ուղեգրութիւն, Տարեգրութիւն եւ Յիշատակարանք, ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս Վ. Ալիմեան, Վիեննա, 1936, էջ 204:

⁷⁰ *Les six voyages De Jean Baptiste Tavernier*, p. 426.

⁷¹ Նույն տեղում:

⁷² XVII դարի հիշատակարաններից մեկում կարդում ենք «ի Շամիրամակերտ մայրաքաղաքն Կանայ», Հիշատակարաններ, Ժէ դար, Մաս Ա, էջ 149, տե՛ս նաև էջ 28, 130, 300:

⁷³ Հիշատակարաններ, Ժէ դար, Մաս Բ, էջ 47: Մեկ այլ տեղ՝ «յաշխարհիս Միջագետաց՝ Ասորոց նահանգիս, ի Տիգրանակերտ մայրաքաղաքս Յամիթ», Հիշատակարաններ, Ժէ դար, Մաս Ա, էջ 594-595, տե՛ս նաև նույն տեղում, էջ 628: Նույնը կրկնվում է նաև դարավերջին 1692 թվականին: Հիշատակարանում կարդում ենք՝ «Տիգրանակերտին/Յամիթ քաղաքին», Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. եօթներորդ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1974, էջ 173:

գալ առանձին, օրինակ՝ «գրեցաւ ի Տիգրանակերտս քաղաքիս»⁷⁴ առանց Ամիթի հիշատակութեան: Շուտով այս «նորահնար հիշողութիւնը» արթնանում է, Ամիթ անունն աստիճանաբար մոռացվում է⁷⁵, իսկ Տիգրանակերտը առնում է նաև Դիյարբաքրի կամ Ամթայ երկրի տեղը՝ մատնանշելով նաև ողջ նահանգի անունը⁷⁶: Տիգրանակերտի հետագա հաղթարշավը պայմանավորված է նաև XIX դարի կեսերից հայկական աշխարհի ազգայնական գաղափարների ներթափանցման հետ, ինչը տեղանունների վերահայկականացման կամ հայկականացման պատճառ է դառնում: Արդեն XIX դարի հայ մամուլի էջերում քաղաքի Ամիդ անունը մոռացված է, տիրապետողը Տիգրանակերտը կամ Դիարբեքիրն է: Այդուհանդերձ, 1885-ին Մարկոս Նաթանյանը զարմանքով արձանագրում է, որ 1884 թ. Տիգրանակերտ է գնացել ու լսել է Ամիդ անունը. «մինչ կը կարծէի իսպառ տեղի տուած լինիլ Տիարպէքիր անուան առջեւ», – գրում է նա⁷⁷:

Աբու Բաքր-ի Թիհրանիի «Քիթաբ-ը Դիյարբեքրիյե» աշխատութեան մեջ լավագոյնն արտացոլված է իսլամական ավանդույթը, որը քաղաքը երկար ժամանակ ճանաչում էր միայն Ամիդ⁷⁸, իսկ շրջակա գավառը՝ Դիյարբաքրը անունով⁷⁹: Այս անունը, որ գալիս է արաբական նվաճման ժամանակներից, պետք է հասկանալ որպէս բաքրը ցեղի բնակչութեան վայր⁸⁰: Քաղաքի Դիյարբեքիր անունը օսմանյան փաստաթղթերում առաջին անգամ կիրառված ենք տեսնում

⁷⁴ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. հիմնգերոդ, էջ 186: Տե՛ս նաև Հիշատակարաններ, Ժէ դար, Մաս Ա, էջ 455, 533, 543:

⁷⁵ Ամիդ անունը շարունակում է օգտագործվել անգամ XVIII դարի վերջում: Տե՛ս Յուզակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանոց և շրջակայից, Անթիլիաս-Լիբանան, 1957, էջ 34:

⁷⁶ Դեռ 1601-ին տեսնում ենք Տիգրանակերտը Դիարբեքիրի փոխարեն օգտագործված. «Սա հանդիպեալ Համիթ Բաղֆի, // Տիգրանակերտ մեր նահանգի», Հիշատակարաններ, Ժէ դար, Մաս Ա, էջ 37:

⁷⁷ Մասիս շաբաթաթերթ, քիվ 3768, Մ. Նաթանեան, Տեղագրական, Տիգրանակերտ կամ Ամիդ (Տիարպէքիր), Կ. Պոլիս, 1885, էջ 967:

⁷⁸ Էվլիյա Չելեքին ֆաղաֆը հիշատակում է նաև Քարա-Ամեդ (Սև Ամեդ) ձևով, տե՛ս Էվլիյա Չելեքի, էջ 180: Դիյարբաքրի կողքին այն գործածական էր նույնիսկ 19-րդ դարի վերջին, տե՛ս Voyage En Russe, Au Caucase et En Perse, dans la Mésopotamie, Le Kurdistan, La Syrie, La Palestine et la Turquie, exécuté pendant les années 1866, 1867 et 1868, tome IV, par T. M., Chevalier Lycklama à Nijeholt, Paris, Amsterdam, p. 230 (ժամոթագրություն), նաև՝ Notes from a Diary in Asiatic Turkey, p. 233:

⁷⁹ Ebu Bekr-İ Tihranî, Kitab-ı Diyarbekriyye, էջ 21:

⁸⁰ Արամ Տեր-Ղևոնդյանը այս մասին գրում է. «Ջազիրան բաժանվում է երեք մասի՝ Դիրա Ռաբիա, Դիար Մոսլար և Դիար Բաֆր: «Դիար» նշանակում է տեղի բնակչության վայր, իսկ «Ռաբիա», «Մոսլար» և «Բաֆր»՝ դրանք արաբական ցեղերի անվանումներ են, որոնք այստեղ բնակություն հաստատեցին նախքան արաբական նվաճումները և նվաճումներից հետո»: Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 16, Արաբական աղբյուրներ Գ, Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 317, ժամոթագրություն 64:

միայն 1691-1692 թթ.⁸¹, այսինքն՝ քաղաքի մահմեդական անունն ավելի ուշ է քաղաքացիություն ստացել ու ներմուծվել պաշտոնական գրագրություն, քան ստեղծվել ու լայնորեն կիրառվել է կարծեցյալ արքայաքաղաքի հայկական (քրիստոնեական) անվանումը՝ Տիգրանակերտը:

Այսպիսով, հայ մատենագրության սկզբնավորման ժամանակաշրջանում՝ V դարում, հայ հեղինակները Ամիդն ու Տիգրանակերտը համարում էին երկու առանձին քաղաքներ: Միայն դարեր անց Մատթեոս Ուռհայեցի պատմիչն է, որ սկսում է այս քաղաքները նույնացնել: Ամիդ-Տիգրանակերտ շփոթը հանգամանորեն քննած Ե. Քասունին իրավացիորեն գրում է, որ «Ամիդի Տիգրանակերտ անունը առանձին առիթով ծնունդ է Ամիդի հայ բնակչության ստեղծած աւանդութեան»⁸²: Նա այն կարծիքն է հայտնում, թե Փ.ա. 69 թ. Տիգրանակերտի ավերումից հետո տեղի հայերը գնացել են Ամիդ, իրենք իրենց համարել տիգրանակերտցի ու այդպես քաղաքը կոչել Տիգրանակերտ⁸³: Եթե նույնիսկ Ամիդ-Տիգրանակերտ շփոթը սկզբավորվել է Փ.ա. I դարում, ապա հետագա դարերի ընթացքում այն մոռացվել է ու վերականգնացել կամ սկզբնավորվել է միայն այն ժամանակ, երբ Ամիդը դարձել է ամենահայաշատ քաղաքներից մեկը: Հայերեն ձեռագրերի հիշատակարանային վկայությունները ապացուցում են, որ առնվազն XII-XV դարերում թե՛ դրսեցիները, թե՛ քաղաքի բնակիչները իրենց քաղաքը կոչել են Ամիդ, բայց ոչ Տիգրանակերտ: Առաջին անգամ հավանաբար 1584 թ. է, որ քաղաքը կոչվում է Տիգրանակերտ, իսկ դրանից հետո Տիգրանակերտ անունը դառնում է խիստ գործածական: Պատճառը, անտարակույս, XV-XVI դարերում Ամիդ քաղաքում հայ բնակչության ստվարացումն է, որի հետևանքով շրջանառության մեջ է դրվում ու ամրապնդվում Ամիդին տրվող Տիգրանակերտ անունը: Թեպետ զարգացած միջնադարի հեղինակներն են սկիզբ դրել Ամիդ-Տիգրանակերտ շփոթին, սակայն Ամիդը Տիգրանակերտ են անվանել ու դա ավանդույթ դարձրել հենց քաղաքի հայ բնակիչները XVI դարի վերջում:

⁸¹ Mehmet Salih Erpolat, «Osmanlı Belgelerinde Amid Adı Yerine Diyarbekir Adının Kullanılmasına Dair Arşiv Kayıtları», *Tanzimat'tan günümüze Diyarbakır*, cilt 1, Editörler: Oktay Bozan, etc, Ankara, 2019. s.14.

⁸² Ե. Քասունի, նշվ. աշխ., էջ 81: Մեկ այլ տեղ հեղինակը գրում է. «Ամիդ-Տիգրանակերտ շփոթը հիմնականին ժողովրդական աանդութենէ՛ ծագում առած է, եւ ապա՛ տեղ գտած նաեւ պատմագրութեան մէջ», նույն տեղում, էջ 69:

⁸³ Հայկ Հակոբյանը, Քասունու տեսակետը հիմք ընդունելով, հրնթացս գրում է. «Մի այլ խնդիր է Մայաֆարկին-Տիգրանակերտը Ամիդ (Դիարբեքիր) քաղաքի հետ շփոթելը, որի սկիզբը դրվել է դեռ հնում, Ամիդ փոխադրված տիգրանակերտցիների կողմից», Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 11:

GOR YERANYAN

THE ARMENIAN TRADITION OF CALLING AMID TIGRANAKERT

Key words: Tigranakert, Amid, Diyarbakir, Mesopotamia, Armenia, Ottoman Empire, The Armenian Population of Tigranakert.

The location of the capital city Tigranakert (Tigranocerta of Greco-Roman sources) has always attracted scholarly attention. Most historians agree that it was not Tigran the Great who founded Amid (modern Diyarbakir). The 5th century Armenian authors mention Amid and Tigranakert as different cities, but starting from Matt'eos Uṙhayets'i, later authors confused and identified Amid with Tigranakert. However, some colophons of Armenian manuscripts witness that in the 12th–15th cc., both the inhabitants and outsiders still called the city Amid and not Tigranakert. Probably for the first time, the name Tigranakert appears in a colophon written in 1584, and later it became widespread. It was rather a result of the mass migration of the Armenian population from the southern regions of Armenia to the prosperous Amid in the 15th–16th centuries, where it became majority and tried to give the city an Armenian name sanctified by the authority of the old tradition. As to the modern name of the city, Diyarbakir, it started to be used in the official Ottoman documents after the Armenians had introduced the name Tigranakert.

ГОР ЕРАНЯН

ОБ АРМЯНСКОЙ ТРАДИЦИИ НАЗЫВАТЬ АМИД ТИГРАНАКЕРТОМ

Ключевые слова: Тигранакерт, Амид, Диарбекир / Диарбакр, Месопотамия, Армения, Османская империя, армянское население Тигранакерта.

Вопрос о местонахождении столицы Тигранакерт всегда привлекал внимание исследователей. Большинство ученых сходятся в том, что Тигран Великий не основывал Амид (нынешний Диарбекир). Армянские авторы V века упоминают их как разные города; а начиная с Матвея Эдесского они стали их путать или отождествлять. Однако колофоны рукописей свидетельствуют о том, что в XII–XV веках как жители города, так и люди вне его все еще

называли его Амидом, а не Тигранакертом. Впервые название Тигранакерт появляется, по-видимому, лишь в колофоне 1584 г. Позднее оно получает широкое распространение. Причина, скорее всего, в том, что армянское население, массово мигрировавшее в XV-XVI вв. в процветающий Амид из южных областей Армении и составившее в нем большинство, стремилось дать городу армянское название, притом освященное авторитетом древней традиции. К тому же современное название города, Диярбакр, стало применяться в официальном османском делопроизводстве позже, чем армяне ввели в обращение наименование Тигранакерт.